

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Վ. Գատվայան

Սասունի բարբառը հայերենի քիչ ուսումնասիրված բարբառային միավորներից է: Այդ բարբառի առաջին ամբողջական նկարագրության հեղինակ Վ. Պետոյանը իրավացիորեն նշում է. ««Կը» ճյուղին պատկանող բարբառների զգալի մասը չի ուսումնասիրված և դրանցից մեկն է Սասունի բարբառը, որի առանձին ուսումնասիրման համար անցյալում չի կատարվել ոչ մի փորձ»²: Հ. Աճառյանը Սասունն ընդգրկել է Մշո բարբառի շրջանակում³: Ա. Ղարիբյանն ընդհանրապես Սասունի բարբառը չի հիշատակում⁴: Այս բարբառին նվիրված աշխատության⁵ մեջ Վ. Պետոյանը հիմնավոր փաստերով հաստատում է, որ «... Սասունի բարբառը Մուշի բարբառը չէ, ոչ էլ նրա մի ճյուղը, այլ նրանից անջատ և ինքնուրույն բարբառ է, թե՛ իր բաղաձայնական սիստեմով և թե՛ ձևաբանական առանձնահատկություններով»⁶: Սասունի բարբառի ընդհանուր նկարագիրը ներկայացրել է Ա. Գրիգորյանը⁷, որը սխալ է համարել Մուշի և Սասունի բարբառների նույնացումը⁸: Գ. Ջահուկյանը բարբառների արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբում Մուշի, Տավորիկ-Մոտկանի և Տիգրանակերտի բարբառների հետ ընդգրկել է և Բուն Սասունի (Գելիեգուզանի) բարբառը՝ Գելիեգուզանի և Հազգոյի տարբերակներով⁹: Վ. Պետոյանը նկատել է, որ Սասունի բարբառով խոսում էին Սասունի բոլոր շրջանների բնակիչները¹⁰՝ խոսվածքային որոշ տարբերություններով, և թվարկել է Թալինի և

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 18T - 6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Վ. Պետոյան, Սասունի բարբառը, էջ 28:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 116, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 2013, էջ 338:

⁴ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն:

⁵ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954:

⁶ Նշվ. աշխ., էջ 28:

⁷ Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 388-404:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 388:

⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

¹⁰ Տեղեկություններ կան, որ Արևմտյան Հայաստանում՝ Սասունում, այժմ էլ կան բնակավայրեր, որոնց հայ բնակչությունը պահպանել է մայրենի բարբառը:

Աշտարակի տարածաշրջանների բնակավայրերը, որոնց բնակիչները պահպանել են իրենց մայրենի խոսվածքը և այժմ էլ հաղորդակցվում են Սասունի բարբառով¹¹: Ըստ Ա.Գրիգորյանի՝ Սասունի բարբառով խոսողների թիվը բարբառի բնօրրանում հասնում էր շուրջ երեսուն հազարի¹²: 20-րդ դարի 70-ական թվականներից սկսած՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով Հայաստանի մի շարք բնակավայրերում Սասունի բարբառի տարբեր խոսվածքների հատկանիշները գրանցել են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները¹³: 2018-2020թթ. «Արագածոտնի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակում¹⁴ դաշտային աշխատանքներ են կատարվել Արագածոտնի մարզի՝ նաև սասունցիների սերունդներով բնակեցված բնակավայրերում, և արձանագրվել է Սասունի բարբառի կենդանի գործածություն դրանց մեծ մասում:

Ա.Գրիգորյանը նկատել է, որ Սասունի բարբառի գոյության վերաբերյալ տեղեկություն են տվել դեռևս Ստեփանոս Սյունեցին (8-րդ դ.) և Թովմա Արծրունին (9-րդ դ.)¹⁵: Գ.Ջահուկյանը, օգտագործելով վիճակագրական բարբառագիտության այսպես կոչված «ետադարձ» ուղու տվյալները և հիմք ընդունելով 5-րդ դարի համար հնարավոր բարբառային հատկանիշները¹⁶, կատարել է այդ դարի բարբառների դասակարգում և հարավկենտրոնական բարբառի կազմում առանձնացրել Հյուսիսային Աղձնիքի կամ Սանասունի (Սասունի) ենթաբարբառը՝ դրան հատկացնելով արդի բարբառների դասակարգման համար ընտրված Նիչ, Այգետուն, Գելիեգուզան և Հազգո բարբառախոս վայրերը¹⁷:

Սասունի բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի միջին հայերենին համապատասխան բաղաձայնական համակարգ, որտեղ հինհայերենյան խուլերի դիմաց ձայնեղներ են գործածվում, ձայնեղների դիմաց՝ խուլեր: Բարբառում

¹¹ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 14:

¹² Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 388:

¹³ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա են նման գրանցումներ պարունակող շուրջ երեք տասնյակ տետրեր:

¹⁴ Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների խմբի կողմից՝ Վ.Կատվայանի ղեկավարությամբ:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 180:

¹⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 185:

անորոշ հոդն ունի հետադաս կիրառություն, առկա է երկակի թվի դրսևորում, հայցական հոլովը նման է ուղղականին և որոշյալ առման դեպքում ստանում է *q* նախդիր, բայն ունի Ի և Ա լծորդություններ, վաղակատար դերբայը՝ *իյ*, իսկ հարակատարը՝ *ուզ* վերջավորություններ, եզակի առաջին դեմքի դիմաց հաճախ գործածական է հոգնակիի ձև և այլն:

Ինչպես բարբառային հայերենի ցանկացած դրսևորում, այնպես էլ Սասունի բարբառը պահպանում և պարունակում է մեր լեզվի զարգացման տարբեր շրջանների բնորոշ շերտեր և իրողություններ, որոնց յուրահատուկ գուգորդումները բարբառային միավորները միմյանցից տարբերակող նշանակություն ունեն: Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սասունի բարբառը բնութագրող հինհայերենյան իրողությունները¹⁸: Մեր կարծիքով՝ քննության ենթակա են նման երկու կարգի իրողություններ՝ ա) հինհայերենյան շրջանից եկող բարբառային հատկանիշներ, բ) գրաբարյան համակարգի արձագանքներ, որոնք արդի լեզվաըմբռնողության տեսանկյունով բարբառային հատկանիշներ են¹⁹:

Հինհայերենյան շրջանին վերաբերող բարբառային 130 հատկանիշներ ներկայացրել է Գ.Ջահուկյանը իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատանքում²⁰: Նկատի ունենալով հատկանիշների այդ խումբը՝ կարող ենք բերել Սասունի բարբառի մի շարք իրողություններ, որոնք բավականին հնություն ունեն և թերևս գալիս են հինհայերենյան կամ ավելի վաղ շրջանից: Նման հատկանիշներից են²¹.

1. Բառասկզբի ձայնեղ հպականների և հպաշփականների խլություն (կեղ՝ գյուղ, պաժնիլ՝ բաժանել, տուռ՝ դուռ, ծօր՝ ձոր, ճառթիլ՝ ջարդել ևլն).
2. Ոչ բառասկզբի խուլ հպականների և հպաշփականների ձայնեղ արտասանություն (գարգըդան՝ կարկատան, գադու, առավօդ ևլն).

¹⁸ Բարբառներում նման իրողությունների հետազոտման կորևորությունը փաստել ենք մեր մեկ այլ աշխատանքում (տե՛ս Վ.Կատվայան, Հինհայերենյան իրողություններ Բայագետի բարբառում, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2014, էջ 77-83):

¹⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 77-78:

²⁰ Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 168-180:

²¹ Ընդհանուր բնույթ ունեցող հատկանիշները չենք բերում: Օրինակները հիմնականում քաղել ենք Արագածոտնի մարզում դաշտային աշխատանքների ժամանակ մեր հավաքած նյութերից:

3. Ձայնավորների քայնացման առկայություն (սուօր, էրախս, քանի, ժամանակ, ջամպա կլն).

4. ուի-ով հոգնակի (օդվի, աճվի, մադվընի, աչըվներ կլն).

5. տի-ով հավաքական-հոգնակի (ախպըրդիկ, քըվըրդիկ, գընգըրդիկ կլն).

6. անի-ով հավաքական-հոգնակի (էդվընգնին, գարսընին, գադվընին կլն).

7. որ/ե/այ/ք/-ով հավաքական հոգնակի (կէրանք, տէրանք կլն).

8. ուկ-ով դերբայ (քընուգ, նըստուգ) և այլն:

Բավականին հետաքրքրական են հինհայերենյան համակարգի արձագանք հանդիսացող հատկանիշները: Այդպիսի իրողություններից են հետևյալները.

1. Բազմավանկ բառերի սկզբում է,ո պարզ ձայնավորների նախնական վիճակի պահպանում²², ինչպես՝ էրինջ, էրգանկ, օչխար, օճիլ և այլն:

2. Հոգնակի թվով հոլովման ժամանակ ք-ց/ծ հերթագայության դրսևորում, ինչպես՝ էրէխանց, կէդացուց, սասունցուց և այլն:

3. Բառավերջի ա, օ ձայնավորներից հետո սեռական հոլովի ցուցիչի բացակայություն (Սօնա դըղան՝ Սոնայի տղան, Սարօ դուն՝ Սարոյի տունը): Մա կարող է առնչվել գրաբարյան Ա վերջադրական հոլովման ենթարկվող որոշ օտար հատուկ անունների սեռականի կազմությանը, որն արտահայտվում էր հետագայում համր դարձած յ-ի հավելումով (Աննա-Աննայ, Եղիա-Եղիայ)²³:

4. Հայցական հոլովում գրաբարյան գ նախդրի գործածություն (ըգտուո ձասկը՝ դուռը ծածկիր, զինկ տէսա՝ իրեն տեսա): Հետաքրքրական է, որ արտացոլվում է նաև նախդրի կիրառության այն օրինաչափությունը, համաձայն որի՝ նախադաս լրացման առկայության դեպքում նախդիրն անցնում է լրացման վրա²⁴ (գէրավ զըմ գ'անկ՝ կէրավ իմ կյանքը):

²² Այս հատկանիշը պահպանել են բարբառային հայերենի շատ դրսևորումներ (տե՛ս նաև Վ.Կատվայան, նշվ. աշխ., էջ 81):

²³ Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Ե., 1976, էջ 27:

²⁴ Այս մասին տե՛ս նաև Հ.Ավետիսյան, Ռ.Ղազարյան, Գրաբարի ձևաբանություն, Ե., 1992, էջ 209:

5. Անորոշ հողի հետադաս կիրառություն (դուն մը ունիմ՝ մի տուն ունեմ. օրըմ գիկա՝ մի օր գալիս է)²⁵:

6. Ի նախդրի դրսևորում ներգոյականի իմաստի արտահայտության համար (ի տուն նստած է)²⁶:

7. Բացառական հոլովի է վերջավորության առկայություն, ինչպես՝ *աշագերդէն*, *ախպօրմէն*, *ծիէն* ևլն:

8. Ներգոյական հոլովի իմաստի արտահայտություն ոչ հոլովական ձևերով: Սասունի բարբառում այս հոլովի իմաստը արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռականով և մեջ կապով, ինչպես՝ դաշտն է գաշխատե, դընէրու մէճ//մըճ դընէրուն:

9. *Երկու* թվականի դիմաց ուղղականի *էրգուք* և հայցականի *գերգուս* ձևերի առկայություն:

10. Անձնական դերանվան գրաբարատիպ ձևերի առկայություն, ինչպես՝ *զիս*, *մըք* (գրբ. մէք):

11. Անցյալ կատարյալի հոգնակի առաջին դեմքում գրաբարատիպ (*ն*-ի բացակայությամբ) վերջավորության առկայություն (մօղ*ացաք*՝ մոտեցանք, գարտ*ացըք*՝ կարդացինք, թըռաք՝ թռանք ևլն):

12. Անցյալ անկատարի վերջավորությունների առնչություն գրաբարի նույն ժամանակաձևի վերջավորություններին: Վ.Պետոյանը նկատել է, որ Սասունի բարբառի անցյալ անկատարի հոգնակի թվի *էք*, *էք*, *էն* վերջավորությունները հանգում են գրաբարյան *էաք*, *էիք*, *էին* վերջավորություններին՝ *է*-ի պահպանումով և մյուս ձայնավորների անկումով²⁷: Կարծում ենք՝ իրողությունը վերաբերում է նաև եզակի թվի ձևերին. գրաբարյան երկրորդ և երրորդ դեմքերի *էիր*, *էր* ձևերի դիմաց բարբառն ունի *էր*, *էր* տարբերակներ: Մինչդեռ եզակի առաջին դեմքի (գրէի) պարագայում *ի*-ի անկումով պիտի մնար է վերջավորությամբ ձև (կըրէ), որը կհամընկներ ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքին, ուստի համակարգը նախընտրել է եզակիի իմաստով ևս գործածել

²⁵ Գրաբարի *ւի* անորոշ դերանվան կիրառության մասին տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 72:

²⁶ Վ.Պետոյանը այս հատկանիշը դիտել է Հազգոյի և Մոտկանի շրջաններում (տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 63):

²⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 50:

հոգնակիի ձևը՝ նույն ժամանակի շրջանակում (հմմտ. գրք. գրէի, գրէիր, գրէր, գրէաք, գրէիք, գրէին և Սսն. բրբռ. կըրէք, կըրէր, կըրէր, կըրէք, կըրէք, կըրէն):

13. Բայական նախահավելվածի դրսևորում (իդալ, իկալ, իլալ): Չնայած գրաբարում անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում էին դրսևորվում *է, է* նախահավելվածները, իսկ Սասունի բարբառում հանդես եկող *ի* նախահավելվածը առկա է անորոշ դերբայի ձևերում, սակայն, հասկանալի է, վերջին դեպքում գործ ունենք նույն իրողության մեկ այլ արտահայտության հետ:

Բարբառում պահպանված հինհայերենյան հնչյունաքերականական տարրերի հետ բնականաբար առկա են նաև հնից եկող բազմաթիվ բառապաշարային իրողություններ: Այսպես, որոշ բառեր ունեն գրաբարից տարբեր հնչյունական կազմություն (օրինակ՝ գրբ. լակել – բրբռ. լըկիլ կամ լըքիլ, գրբ. մողես – բրբռ. մուզլէզ, գրբ. տիղմ – բրբռ. դիլ), երբեմն՝ իմաստային տարբերություն (գրբ. իմանալ՝ հասկանալ – բրբռ. իմնալ՝ զարթնել, գրբ. մալուխ՝ հաստ չվան – բրբռ. մալուխ՝ չոր ծառի ճյուղ): Բարբառում գործածական են գրաբարյան շերտի բառեր, որոնք չկան կամ սովորական չեն գրական հայերենում (օրինակ՝ գրբ. անագան – բրբռ. անգան՝ ուշ, գրբ. գան – բրբռ. կան՝ վերք, գրբ. գուբ – բրբռ. կուպ՝ փոս, գրբ. անձնագով – բրբռ. անձնակով՝ իր անձը գովող և այլն): Բարբառի բառապաշարում պահպանվել են նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ, ինչպես՝ տարթ (անասունի չորացրած աղբ), կլըմբօզ (գլուխկոնծի), քշփոտուն (անհարթ), քոնուկ (ծաղկատար), շէք (քայլ), լավըտիլ (վրան կեղտոտե)/, լիժ (հարթ, ողորկ) և այլն:

Այսպիսով, Սասունի բարբառում հինհայերենյան իրողությունները զգալի մի շերտ են ներկայացնում՝ վկայելով ինչպես բարբառի անցած երկարատև ուղու, հարստության, այնպես էլ հայոց լեզվի տարածաժամանակային ամբողջականության մասին: Ինչպես Սասունի, այնպես էլ այլ բարբառների՝ հնից եկող շերտերի համակարգված հետազոտությունը էական նպաստ կարող է բերել հայոց լեզվի պատմական ուսումնասիրությանը:

